



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



AFIC

COUNTERPART
INTERNATIONAL



ԳՈՐԾԱՐԱՐԻ ՉԱՅՆ

Օգոստոս-2011

Իրադարձություններ/Նորություններ/Հայտարարություններ /Հոդվածներ/Օրենսդրական փոփոխություններ
ԻՐԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ **ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



«Բիզնես շահերի պաշտպանության ցանցը» համալրվեց ևս երկու անդամներով

Մ.թ. օգոստոսին «Գործարար շահերի պաշտպանության ցանցի» հզորացման և ընդլայնման ծրագրի շրջանակներում Լոռու մարզում կազմակերպված հանդիպումների արդյունքում Ցանցը համալրվեց ևս երկու անդամներով: Լոռու մարզի առևտրաարդյունաբերական պալատը և «Ռուզ-Դան» ՍՊԸ-ն ստորագրել են «Գործարար շահերի պաշտպանության ցանցի»-ին միանալու հուշագիրը:

Վարչապետը դիվանագետներին է ներկայացրել Հայաստանի տնտեսական իրավիճակը և կառավարության առաջիկա ծրագրերը

Վարչապետ Տիգրան Սարգսյանը մասնակցել է օգոստոսի 30-31-ը Երևանի Գարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում անցկացվող ՀՀ արտաքին գործերի նախարարության կենտրոնական սպարատի և դիվանագիտական ներկայացուցչությունների ու հյուպատոսական հիմնարկների ղեկավարների հավաքին:

Տիգրան Սարգսյանը վերջիններիս է ներկայացրել Հայաստանի տնտեսության ներկա վիճակը, կառավարության առաջիկա ծրագրերն ու նախատեսվող միջոցառումները: Վարչապետը, ամփոփելով 2011թ.-ի առաջին կիսամյակի տնտեսական արդյունքները, նշել է, որ 2011 թ.-ին նախատեսվում է համախառն ներքին արդյունքի 4,6 տոկոսանոց աճ: Անդրադառնալով մեր երկրում արձանագրվող գնաճին՝ գործադիրի ղեկավարը նշել է, որ Հայաստանը 10 տոկոսանոց գնաճային փուլից արդեն իսկ մուտք է գործել 5 տոկոսանոց փուլ, որը 2012թ.-ի ընթացքում կստեղծի գնաճի զսպման ավելի բարենպաստ պայմաններ:

«Բիզնես շահերի պաշտպանության ցանցը» համալրվեց ևս երկու անդամներով

ՊԵԿ-ի սպասարկման որակի բարելավման հերթական քայլը. հարկային գրասենյակները որպես մեկ միասնական տեղեկատվական համակարգ

Վկառուցվեն մաքսային անցման ժամանակակից կետեր

Բարելավվում է օդային բեռնափոխադրումների գործարար միջավայրը

Բժշկությունն ամբողջ աշխարհում բիզնես քաղաքիչ ունի ևս պետք չի սպասել, թե երբ է բյուջեն հարստանալու. Գարեն Գարապետյան

Հայրենական արտադրողների միության ղեկավար. Արդյունաբերությունը Հայաստանում պետք է դասվի քաղաքական կատեգորիաների շարքը

Նոտարին դիմող քաղաքացին այլևս բանկ դիմելու անհրաժեշտություն չի ունենա

ANCA. Անհրաժեշտ է հայ-ամերիկյան նոր համաձայնագիր՝ կրկնակի հարկումից խուսափելու համար

Ֆինանսների նախարարության առաջնահերթ ծրագրերից է «Doing Business» վարկանիշային սանդղակում Հայաստանի դիրքի բարելավումը

Սեպտեմբերին Երևանում կանցկացվի AJA ոսկերչական առաջին համաշխարհային ցուցահանդեսը

Խրախուսվում է ժամանակակից սարքավորումների ներմուծումը



Խոսելով կառավարության առաջնահերթ ծրագրերի մասին՝ վարչապետը նշել է, որ դրանց թվում է բիզնես միջավայրի բարելավման գործընթացը: Այս տարվա ընթացքում գործադիրի կողմից այդ ուղղությամբ իրականացվել են կարևորագույն միջոցառումներ, մասնավորապես, հարկային, մաքսային վարչարարության զարգացման, էլեկտրոնային հաշվետվությունների համակարգի ներդրման առումով, որոնք պետք է էապես նվազեցնեն հարկային տեսուչների շփումը բիզնես ոլորտի ներկայացուցիչների հետ. **«Այսօր Հայաստանում 15 րոպեի ընթացքում հնարավոր է գրանցել ձեռնարկություն էլեկտրոնային եղանակով: Սա բիզնես միջավայրի բարելավման կարևորագույն գործոններից մեկն է»**, - նշել է վարչապետը: Կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների հաջորդ ուղղությամբ՝ Եվրամիության հետ խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շրջանակներում կատարվում է մաքսային գործառնությունների համապատասխանեցում եվրոպական լավագույն չափանիշներին, մտավոր սեփականության պաշտպանության գրանցման համակարգի ներդրում և այլն:

Գործադիրի ղեկավարի խոսքով՝ կառավարության բարեփոխումների ծրագրի համաձայն իրականացվում է կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, որը ներառում է նաև հակակոռուպցիոն համալիր միջոցառումների ծրագիր: **«Այն ունի երկարաժամկետ միտում և ենթադրում է, առաջին հերթին, նախարարությունների, տեսչությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և գործակալությունների գործառնությունների հստակեցում ու պատասխանատվության սահմանում: Ծրագրային քաղաքականության մշակումը, իրականացումը և մոնիթորինգը պետք է լինի նախարարությունների հիմնական գործառնությունը, մնացած գործառնությունները պետք է իրականացվեն տեսչությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և գործակալությունների կողմից»**:

Վարչապետը տեղեկացրել է դիվանագետներին, որ մեր երկրում առաջին անգամ մշակվում է արդյունաբերական քաղաքականության վերաբերյալ հայեցակարգ և դրա իրականացման ծրագիր: Նրանում կներկայացվի Հայաստանի մոտակա 10 տարիների տնտեսական կառուցվածքը՝ բացահայտելով առկա ներուժը, հարաբերական առավելություններն ու դրանք սահմանափակող գործոնները: Անդրադառնալով հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցմանը՝ վարչապետը նշել է, որ այն համապատասխանելու է միջազգային ամենաբարձր չափանիշներին: **«Այսպիսի ծրագիր Հայաստանում երբե՛ն է չի իրականացվել: Դրա ընդհանուր ծավալը գնահատվում է 1,5 միլիարդ դոլար: 500 մլն դոլարի վերաբերյալ արդեն իսկ ստորագրվել է համապատասխան պայմանագիր, հայտարարվել է նաև ճանապարհի կառուցման մրցույթ, որին մասնակցելու համար հայտ է ներկայացրել 15 արտասահմանյան ընկերություն: Ծրագրվում է ճանապարհի շինարարական աշխատանքներն սկսել այս տարի»**:

Ըստ կառավարության ղեկավարի՝ շարունակվում են աշխատանքները նաև կապված Իրան-Հայաստան երկայթղի կառուցման հետ: Վերջինիս նախագծերի մշակման, երկայթղի կառուցման ժամանակացույցի և ֆինանսավորման խնդրով աշխատանքներ են տարվում Իրանի և Ռուսաստանի համապատասխան գերատեսչությունների հետ:

31.08.2011
gov.am

ՊԵԿ-ի սպասարկման որակի բարելավման հերթական քայլը. հարկային գրասենյակները որպես մեկ միասնական տեղեկատվական համակարգ

Պետական եկամուտների կոմիտեի 2011-ի օրակարգի թիվ 1 հարցը շարունակում է մնալ հարկ վճարողների սպասարկման որակի բարելավումը: Կոմիտեն հետամուտ է, որպեսզի բոլոր հարկային տեսչությունները համապատասխանեցվեն մեկ ընդհանուր չափանիշի՝ և՛ սպասարկման մակարդակի բարձրացման, և՛ շենքային պայմանների բարելավման առումով:

Երևանում առաջին խոշոր սպասարկման կենտրոնը բացվել է Կենտրոնի և Մյասնիկյանի հարկային տեսչություններում, որին հաջորդել են Արաբկիրի և Խոշոր հարկ վճարողների տեսչությունների, այնուհետև Էրեբունու հարկային տեսչության հարկատուների սպասարկման կենտրոնները, իսկ մարզերում գործում է Վանաձորի տարածաշրջանային սպասարկման առաջին կենտրոնը: Հարկային տեսչություններում գործող բոլոր սպասարկման կենտրոններն ապահովված են առօրյա աշխատանքի համար անհրաժեշտ ժամանակակից պայմաններով՝ վերազինված նորագույն սարքավորումներով և վերանորոգված աշխատասենյակներով:

ՊԵԿ նախագահ Գագիկ Խաչատրյանը հարկային տեսչությունների առջև խնդիր է դրել՝ նմանատիպ սպասարկման կենտրոնների հիմնական նպատակադրումը շատ հստակ պետք է լինի. հասնել նրան, որ անկախ տարածաշրջանային պատկանելությունից, հնարավոր լինի ՊԵԿ-ի ցանկացած սպասարկման կենտրոնում՝ գրասենյակում իրականացնել ընթացակարգեր՝ ինչպես հարկային, այնպես էլ մաքսային ծառայությունների հետ կապված: Այսինքն, օրինակ՝ Կապանի հարկային տեսչությունում գրանցված հարկատուն հնարավորություն ունենա, անհրաժեշտության դեպքում, ասենք՝ Նոր Նորքի հարկային տեսչության սպասարկման կենտրոն մտնել և անհրաժեշտ հաշվետվություններն այնտեղ հանձնել կամ Բագրատաշենի մաքսակետի հետ գործով առնչվող անձը կարողանա նույն հարկային գրասենյակից իրականացնել անհրաժեշտ գործառնություններ՝ առանց Բագրատաշեն այցելելու: Արդյունքում՝ մեկ միասնական տեղեկատվական համակարգը հնարավոր կդարձնի Պետական եկամուտների կոմիտեի հետ կապված բոլոր գործառնություններն իրականացնել ցանկացած տարածքային հարկային գրասենյակից՝ նպաստելով համակարգի հետ շփումների արդյունավետության ու հարմարավետության բարձրացմանը:

Երևանում՝ հարկ վճարողների սպասարկման հերթական՝ չորրորդ ժամանակակից կենտրոնն է բացվել Նոր Նորքի հարկային տեսչությունում, որի աշխատանքներին ծանոթանալու նպատակով նորաբաց կենտրոն էր այցելել Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանը: Կենտրոնի շինարարական աշխատանքները սկսվել են այս տարվա մարտից և ընդամենը մի քանի ամիս անց, այն արդեն սպասարկում է տեսչության հարկատուներին՝ միջազգային չափանիշներին համապատասխան սպասարկման սրահով և հարմարավետ աշխատասենյակներով՝ համալրված

Ժամանակակից համակարգչային տեխնիկայով և անհրաժեշտ այլ պարագաներով: 2-րդ հարկից առաջին հարկ է տեղափոխվել նաև տեսչության Տեղեկատվության և վերլուծությունների բաժինը, դրանով իսկ ավելի հեշտացնելով հարկ վճարողների աշխատանքն ու ելումուտը:

Ընդգծելով, որ հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացումը Կոմիտեի գերակա ուղղություններից է, ՊԵԿ նախագահի տեղակալ Արմեն Ալավերդյանը լրագրողների հետ զրույցում նշել է, որ դեռևս անցած տարվանից սկսած այս ուղղությամբ զգալի աշխատանքներ են կատարվել, և այսօր էլ՝ ընթացքի մեջ են: Նրա խոսքով, սպասարկման այս սրահն առանձնանում է նրանով, որ Նոր Նորք վարչական տարածքն այժի է ընկնում հարկ վճարողների մեծաքանակությամբ, և դրանց գերակշիռ մասն անհատ ձեռնարկատերեր են, փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներ: “Այս համայնքում շուրջ 8000 հաշվառված հարկ վճարողներ կան, որոնց կեսը գործող են, և սպասարկման սրահի գործարկումն այս տարածքում համարում ենք շատ կարևոր: Ընդ որում՝ սա դրսևորվում է ոչ միայն գեղեցիկ տարածք տրամադրելով, այլև գործառնությունների փոփոխությամբ: Այն է, որ հարկ վճարողների սպասարկմամբ զբաղվող մեր աշխատակիցները՝ ստուգողների, գանձողների և մեր մյուս աշխատողներից առանձին սրահում են աշխատում, և եթե հարկ վճարողը գա իրեն հուզող հարցերով, ինքն այստեղ կգտնի իր բոլոր հարցերի պատասխանները՝ կապված կունկրետ հարկային տեսչության հետ, քանի որ գործում է նաև հատուկ տերմինալ”,- նշել է Արմեն Ալավերդյանը: Նա միաժամանակ տեղեկացրել է, որ հարկատուների համար արդեն մեկ ամիս է, ինչ գործում է ՊԵԿ-ի հեռախոսագանգերի սպասարկման կենտրոն, որը ևս հարկատուներին հնարավորություն է ընձեռում ստանալ կառույցի հետ կապված իրենց մտահոգությունների պատասխանները:

Բարեփոխումների արդյունքում, հարկ վճարողների սպասարկումն իրականացվում է “մեկ պատուհանի” սկզբունքով. Նոր Նորքի տեսչություն այցելելիս նրանք այլևս ստիպված չեն լինի իրենց հուզող հարցերը պարզաբանելու կամ խնդիրներին լուծում տալու համար ավելորդ ժամանակ և միջոցներ վատնել՝ սենյակից սենյակ, հարկից հարկ անցնելով: Արդյունքում՝ էապես նվազեցվում է հարկային տեսուչ-հարկ վճարող շփումը: Այստեղ հարկատուները կարող են կողմնորոշվել նաև ցանկացած հարցի վերաբերյալ. նորաբաց կենտրոնում ևս այցելուներին հասանելի տեղում տեղադրված է տեղեկատվական տերմինալ, հայտարարությունների ցուցատախտակ, գովազդային հոլովակների մոնիտոր, ինչն իրենց հերթին նույնպես կնպաստեն հարկ վճարողների իրազեկման մակարդակի բարձրացմանը: Սպասարկման կենտրոնի միջոցով է իրականացվում հարկատուների հետ տարվող աշխատանքի մոտ 90 տոկոսը, այդպիսով՝ շփումը տեսչության մյուս ստորաբաժանումների հետ նվազեցվում է՝ հասցվում նվազագույնի: Նոր Նորքի հարկային տեսչության տեղեկատվության և վերլուծությունների բաժնի պետ Արման Կարապետյանն ընդգծել է, որ ՊԵԿ-ի կողմից իրականացվող բարեփոխումների արդյունքում էապես բարձրացել է աշխատանքի արդյունավետությունը. “Սպասարկման միջավայրի նման բարելավումը, մեր կարծիքով, դրական ազդեցություն կունենա թե՛ հարկային ծառայողների, թե՛ հարկ վճարողների բարոյահոգեբանական ընկալման վրա: Եվ որպես վերջնական արդյունք, այն իր հերթին դրական ազդեցություն կունենա պետական բյուջեի եկամուտների հավաքագրման գործում”:

Այսպիսով, Նոր Նորքի հարկային տեսչությունում գործող նորաբաց սպասարկման կենտրոնում ևս ստեղծված են բոլոր պայմանները հարկ վճարողներին արագ և որակյալ սպասարկելու համար՝ մատուցելով նրանց բարձրակարգ և ժամանակակից չափանիշներին համապատասխան ծառայություն: Հիմնովին վերանորոգվել է նաև տեսչության երկրորդ հարկն ամբողջությամբ, բարեկարգվել են նաև տեսչության շենքի հարակից տարածքները, կատարվել են կանաչապատման լայնածավալ աշխատանքներ, ինչն անտարբեր չի թողնի յուրաքանչյուր այցելուի: Այստեղ իրականացված բարեփոխումների առաջին գնահատականը տալիս են հենց իրենք՝ Նոր Նորքի հարկային տեսչության հարկ վճարողները: Նույն Ղահրամանյանի խոսքերով, եթե մինչ այս՝ բարի նախանձով էր հետևում Կենտրոնի և Մյասնիկյանի կամ մյուս հարկային տեսչությունների վերանորոգված սպասարկման կենտրոնների գործունեությանն, ապա այսօր իրենց տեսչության հարկ վճարողները նույնպես հպարտանալու առիթ ունեն. “Նորաբաց, ժամանակակից չափանիշներով գործող սպասարկման այս սրահը զգալի դուրսացրել է մեր աշխատանքը: Հարկային ծառայող-հարկատու փոխհարաբերություններում ջերմ գործնական մթնոլորտ է ձևավորվել”: Իսկ մեկ այլ հարկատու՝ Սամվել Սարգսյանն ընդհանուր առմամբ բարձր է գնահատում վերջին 3 տարիների ՊԵԿ-ի կողմից իրականացվող բարեփոխումների ընթացքը: Ըստ նրա, բարելավվել է վարչարարությունը, կրճատվել փաստաթղթաշրջանառությունը, իսկ էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնելու արդյունքում բավականին ժամանակ են խնայում և ազատվում ևս մեկ անգամ տեսչություն այցելելու հոգսից: “Բացի այդ, սրահում տեղադրված տերմինալներից նույնպես կարողանում ենք հաշվետվություն ներկայացնել այլ տարածքային հարկային տեսչություններ, օրինակ, ես կարող եմ հենց այստեղից հարկային գործառնություններ իրականացնել Գյումրիի տարածքային հարկային տեսչություն՝ առանց այնտեղ այցելելու: ՊԵԿ-ի կողմից այլ ուղղություններով իրականացվող բարեփոխումները ևս զգալի են. ակնհայտ է հատկապես շենքայն պայմանների բարելավման գործընթացը: Մեր աշխատանքն այստեղ դարձել է ավելի բարեկեցիկ, արժանավայել, համապատասխան 21-րդ դարին”:

Հարկ վճարողների սպասարկման ուղղությամբ իրականացվող բարեփոխումները շարունակական բնույթ են կրելու. ընթացքի մեջ են նաև Շենգավիթի, Քանաքեռ-Զեյթունի հարկային տեսչություններում նմանատիպ սպասարկման կենտրոններ բացելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Կոմիտեի ղեկավարությունը հետևողական է հարկ վճարողների սպասարկման ամբողջ համակարգը բարձր և մեկ ընդհանուր մակարդակի հասցնելու հարցում: Մեկ միասնական տեղեկատվական համակարգը որպես հարկային գրասենյակների հիմնական գործառնություն՝ էլ ավելի կնպաստի հարկ վճարողների սպասարկման որակի կատարելագործմանը, դրանով իսկ ՊԵԿ-հարկատու փոխհարաբերությունները տեղափոխելով որակապես նոր հարթություն:

26.08.2011
taxservice.am

Վկառույցվեն մաքսային անցման ժամանակակից կետեր

Այսօր տեղի է ունեցել ՀՀ կառավարության նիստ, որը վարել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը: Հայ-վրացական պետական սահմանի Բագրատաշենի, Գոգավան-Պրիվոլնոյեի և Բավրայի անցման կետերի շինարարական աշխատանքների իրականացման համար կառավարությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի ղեկավարությամբ ստեղծել է

մրցութային հանձնաժողովը և հաստատել դրա՝ ՀՀ մի շարք նախարարությունների և գերատեսչությունների ներկայացուցիչներից բաղկացած կազմը: Վարչապետ Տիգրան Սարգսյանը հանձնարարել է հնարավորինս կարճ ժամկետում պատրաստել մրցույթի անցկացման կանոնակարգը և տեխնիկական առաջադրանքը, որպեսզի շինարարական աշխատանքներն սկսվեն Բագրատաշենում, Գոգավանում և Բավրայում: «Մենք կառուցելու ենք ժամանակակից մաքսային կետեր, կարելի է ասել՝ համալիրներ, որոնք ներառելու են պետության կողմից տրամադրվող բոլոր ծառայությունները, - հավելել է վարչապետը: - Պետք է կարողանանք մեկ պատուհանի սկզբունքով որակապես նոր ծառայություններ մատուցել, և չափազանց կարևոր է, որ մեր ունեցած նախագծերը համապատասխանում են միջազգային լավագույն ստանդարտներին»: Տիգրան Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Եվրամիության գործընկերներին, որոնց տրամադրած դրամաշնորհով էլ մշակվել են նախագծերը: «Այժմ մեր առջև Հանրապետության Նախագահի կողմից հրատապ խնդիր է դրված՝ հնարավորին չափ շուտ սկսել շինարարական աշխատանքները և ունենալ ժամանակակից մաքսային կետեր», - նշել է վարչապետը և ավելացրել, որ առաջիկայում Մեդրիում ևս պետք է կառուցվի արդիական մաքսակետ:

25.08.2011

gov.am

Բարելավվում է օդային բեռնափոխադրումների գործարար միջավայրը

Երեք որոշմամբ ՀՀ կառավարությունը փոփոխություն է կատարել ավելի վաղ ընդունած իր որոշումներում, որոնցով սահմանվել են քաղաքացիական օդանավով ռազմական նշանակության արտադրանքի օդային փոխադրում իրականացնելու, օդային երթուղիների կազմակերպման, աերոնավիգացիոն կապի և դիտարկման, աերոնավիգացիայի օդերևութաբանական ապահովման, աերոնավիգացիոն տեղեկատվության ծառայություն իրականացնող կազմակերպություններին, վտանգավոր բեռների օդային փոխադրման, դրանց սպասարկումն իրականացնող կազմակերպություններին և նման բեռների օդային փոխադրումն սպասարկող կազմակերպություններին թույլտվություն տալու կարգերը: Փոփոխությունները թելադրված են կառավարության գործարար միջավայրի բարելավման հերթական քայլերին վերաբերող որոշմամբ, որի համաձայն իրավաբանական և ֆիզիկական անձանց համար սահմանված կանոնադրություն, պետական գրանցման վկայական և դրանց պատճեններ ներկայացնելու պարտավորությունը համարվում է կատարված, եթե պետական մարմին դիմելիս ներկայացվող դիմումում կամ հայտում հայտատուին կամ դիմումատուին վերաբերող տեղեկությունների շարքում նշվում է իր պետական գրանցման համարը:

Փոփոխություններ և լրացում կատարելով ավելի վաղ ընդունած իր որոշումներից մեկում, ՀՀ կառավարությունը մեծացրել է ԱԱՀ և ակցիզային հարկի հաշվանցման և/կամ վերադարձման ավտոմատացված համակարգի նոր չափորոշիչների ներդրման արդյունավետությունը, ինչի շնորհիվ մեծ քանակի հարկ վճարողներ կարող են օգտվել նշված ավտոմատ համակարգից: Դրա շնորհիվ կնվազի հարկային տեսուչ-հարկ վճարող շփումը, կպակասի թղթաբանությունը: Նիստում հավանություն է տրվել նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ ԱԱՀ ավտոմատացված վերադարձի համակարգի գործառնական նկարագրին:

Իր նախկին որոշումներից մեկում գործադիր կատարել է փոփոխություններ և լրացումներ, որոնց շնորհիվ ակնկալվում է օտարերկրյա անձանց կողմից ներմուծվող ակնհայտ առևտրային քանակության ապրանքների բնաիրային սահմաններում նախատեսել նաև մաքսային ռեժիմներով ապրանքների ներմուծման հնարավորություն, պարզեցնել սահմանամերձ շրջաններից գյուղատնտեսական որոշ ապրանքների ներմուծման ընթացակարգը և կրճատել որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված այն ապրանքները, որոնց համար իրավական այլ ակտերով սահմանված են արգելք կամ սահմանափակում:

25.08.2011

gov.am

Բժշկությունն ամբողջ աշխարհում բիզնես բաղադրիչ ունի եւ պետք չի սպասել, թե երբ է բյուջեն հարստանալու. Կարեն Կարապետյան

Որոշ բուժհաստատությունների ղեկավարներ հստակ պատկերացում չունեն զարգացման ուղիների վերաբերյալ եւ չի բացատրվում, որ նրանք առաջիկայում իրենց տեղը զիջեն ավելի հմուտ կառավարիչների: Այս մասին այսօր՝ օգոստոսի 12-ին հայտարարել է Երևանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը՝ քաղաքապետարանի ենթակայությամբ գործող առողջապահական հիմնարկների ղեկավարների հետ հանդիպման ժամանակ:

Քաղաքապետարանի մամուլի ծառայությունից news.am-ին հայտնում են, որ դեռևս տարեկգրին քաղաքապետը առողջապահական ոլորտի պատասխանատուներին հանձնարարել էր ծրագրային առաջարկություններ ներկայացնել՝ ներառելով ֆինանսատնտեսական գործունեության բարելավման վերաբերյալ կանխատեսումների հաշվարկները, ինչպես նաև մասնավոր ներդրողների հետ համագործակցության հնարավոր տարբերակները:

Կառավարման նոր մեխանիզմների ներդրումը նպատակ ունի բարելավել բուժսպասարկման ոլորտի երթակառուցվածքները, նորագույն բուժսարքավորումների վերագինում ապահովել եւ էականորեն բարձրացնել բնակչության բուժսպասարկման որակը:

Ծանոթանալով անցած ամիսներին կատարված աշխատանքներին եւ ոլորտում առկա հիմնախնդիրներին՝ քաղաքապետը նշել է, որ ներկայացված ծրագրային պատկերացումները դեռևս հեռու են զարգացման արդյունքներ ակնկալելուց: Քաղաքապետի խոսքով, ծրագրերը պետք է ունենան իրական տեսլական, գործողությունների հստակ ժամանակացույց եւ ձևով մեխանիզմներ՝ բուժառայությունների ժամանակակից պահանջները բավարարելու համար:

Կարեն Կարապետյանը մեկ անգամ եւս ընդգծել է, որ փոխշահավետ ծրագրերի միջոցով հնարավոր է լուրջ ներդրումներ ներգրավել առողջապահության ոլորտի զարգացման գործում. «Բժշկությունն ամբողջ աշխարհում բիզնես բաղադրիչ ունի, դուք բացի այդ բաղադրիչից ունեք պետական ծառայություն կատարելու պարտավորություններ: Սպասենք, թե երբ է բյուջեն

հարստանալու, որ մեր պատակերացումները բավարարվի՞, անհեռանկարային ճանապարհ է», - նշել է Կարեն Կարապետյանը:

Նա առաջարկել է համաբուժարանների և մյուս բուժհաստատությունների աշխատանքի վարկանշային սանդղակ կազմել և համապատասխանաբար գնահատական տալ կատարված աշխատանքին:

12.08.2011

news.am

Հայրենական արտադրողների միության ղեկավար. Արդյունաբերությունը Հայաստանում պետք է դասվի քաղաքական կատեգորիաների շարքը

Հայաստանը պետք է դառնա խոշոր արդյունաբերական երկիր: Այդ մասին այսօր՝ օգոստոսի 12-ին կայացած մամուլի ասուլիսում հայտարարել է Միացյալ առաջադիմական կոմունիստական կուսակցության նախագահ, Հայրենական սպորանքարտադրողների միության ղեկավար Վազգեն Սաֆարյանը: Նրա խոսքով, Հայաստանում պետք է արդյունաբերական զարգացման հայեցակարգ ընդունվի:

«Արդյունաբերությունը Հայաստանում պետք է դասվի քաղաքական կատեգորիաների շարքը, դա տնտեսական զարգացման միակ ուղին է», - ընդգծել է նա:

News.am-ի թղթակցի խնդրանքին՝ մեկնաբանել իր հայտարարությունների տրամաբանությունը, երբ բնապահպանական կազմակերպությունները ահագանգ են հնչեցնում արդյունաբերական ընկերությունների կողմից շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ, իսկ ինքն առաջարկում է ավելացնել արդյունաբերական արտադրության ծավալները, ասուլիսի բանախոսը պատասխանել է. «Խորհրդային տարիներին Հայաստանն արդեն արդյունաբերական երկիր եղել է, մեզ մոտ ծաղկում էր գիտական արդյունաբերությունը և ոչինչ էլ չէր: 1988թ. Հայաստանի բյուջեն կազմում էր 14,9 մլրդ ռուբլի, որի 66,7 տոկոսը հատկացվում էր արդյունաբերությանը: Մենք պետք է վերականգնենք այդ ծավալները», - համոզմունք է հայտնել գործիչը և հավելել. «Արդյունաբերությունը պետք է գումար բերի, որի մի մասը գնալու է բնապահպանական խնդիրների լուծմանը»:

12.08.2011

news.am

Նոտարին դիմող քաղաքացին այլևս բանկ դիմելու անհրաժեշտություն չի ունենա

Նոտարական ծառայությունների սպասարկման ոլորտում դիմող քաղաքացին այլևս բանկ դիմելու և այնտեղ վճարում անելու անհրաժեշտություն չունի:

Կառավարությունն իր այսօրվա՝ օգոստոսի 11-ի նիստում որոշել է, որ նոտարական գործողությունների կատարման համար պետական տուրքը կանխիկ գանձելիս անդորրագրի փոխարեն նոտարը պետական տուրք վճարողին պետք է տրամադրի հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոն:

Ակնկալվում է, որ դա կնպաստի նոտարական ծառայությունների ավելի արագ և արդյունավետ մատուցմանը՝ կրճատելով եւս մեկ օղակի (բանկ) դիմելու քաղաքացու պարտականությունը, նաև «մեկ պատուհանի» սկզբունքի արդյունավետ ներդրմանը:

Կառավարության մամուլի ծառայությունից news.am-ին հայտնում են, որ վարչապետ Տիգրան Սարգսյանը ոլորտի պատասխանատուների ուշադրությունը հրավիրել է այն խնդրի վրա, որ պետք է խուսափել բոլոր վճարումները նոտարներին վերապահելուց: «Պետք է մտածել, որպեսզի քաղաքացիները կարողանան տեղում վճարել նաև քարտերով:

Նոտարիատներում համապատասխան տերմինալների տեղադրման հարցում պետք է խնդրենք Կենտրոնական բանկի օժանդակությունը, որպեսզի քաղաքացին տեղում անկանխիկ վճարման հնարավորություն ունենա», - ասել է Տ. Սարգսյանը:

Հաջորդ որոշմամբ հստակեցվել է ռեգիստրի կողմից մատուցվող ծառայությունների ցանկը, ինչը նույնպես կնպաստի իրավաբանական անձի գրանցման «մեկ պատուհանի կանգառ» համակարգի արդյունավետ իրագործմանը:

11.08.2011

news.am

ANCA. Անհրաժեշտ է հայ-ամերիկյան նոր համաձայնագիր՝ կրկնակի հարկումից խուսափելու համար

Կրկնակի հարկման վտանգը նվազեցնող նոր հայ-ամերիկյան համաձայնագիրը կամրապնդի ԱՄՆ-ի և Հայաստանի տնտեսական հարաբերությունները՝ երկկողմ առևտրի հիմնական խոչընդոտողների վերացման ճանապարհով, և բացի այդ, կամրապնդի հայ և ամերիկացի ժողովուրդների հաստատուն կապերը:

Ամերիկայում Հայաստանի ազգային կոմիտեի (ANCA) նախագահ Քեն Խաչատրյանը նամակ է ուղղել ԱՄՆ-ի ֆինանսների նախագահ Տիմոթի Գայտներին՝ նշելով, որ կրկնակի հարկահավաքման նոր համաձայնագիրը հնարավորություն կտա հետաքրքրությունների հիմք ստեղծել նաև առանձին անձանց համար: Այդ մասին հաղորդում է Asbarez-ը:

«Դա կկանխի հարկային շատ վեճերի առաջացումը և կապահովի դրանց կարգավորման հստակ ճանապարհները», - գրել է նա: «Շատ պարզ է. կրկնակի հարկման վերաբերյալ հայ-ամերիկյան համաձայնագրի բացակայությունը Հայաստանը դարձնում է նվազ գրավիչ ամերիկյան ներդրումների համար, և միաժամանակ դրա բացակայությունը ԱՄՆ-ին նվազ գրավիչ է դարձնում արտասահմանում բիզնես ունեցող հայկական ընկերությունների համար», - ասվում է նամակում:

Նա հավելել է, որ «Հայաստանի հարեանը՝ Թուրքիան ԱՄՆ-ի հետ ունի կրկնակի հարկումը բացառող համաձայնագիր: ԱՄՆ-ի հետ նման համաձայնագրեր ունեն նաև Ռուսաստանը, Ուկրաինան և Բալթյան երկրները՝ Բուստինիան, Լատվիան և Լիտվիան: Իսրայելը, Իռլանդիան, Իտալիան, Հունաստանը և այլ երկրներ, որոնք ԱՄՆ-ում մեծ սփյուռք ունեն, նույնպես ԱՄՆ-ի հետ նման համաձայնագիր ունեն, բայց Հայաստանը դեռևս չունի»:

10.08.2011

news.am

Ֆինանսների նախարարության առաջնահերթ ծրագրերից է «Doing Business» վարկանիշային սանդղակում Հայաստանի դիրքի բարելավումը

Գյուղատնտեսության նախարարության գերակայություններն են համայնքային աջակցության ծրագրերի միջոցով գյուղատնտեսության արտադրողականության բարձրացումն ու գյուղական բնակչության եկամուտների ավելացումը: Այս մասին այսօր՝ օգոստոսի 8-ին, հայտարարել է Գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը՝ Կառավարությունում իր ղեկավարած գերատեսչության՝ 2011թ-ի 1-ին կիսամյակի կատարողականի հաշվետվությունը ներկայացնելիս:

Նրա խոսքով, գյուղնախարարության գերակայությունների մեջ է մտնում նաև հանրապետության առնվազն 40 համայնքում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը, ագրարային ոլորտի տեղեկատվական և խորհրդատվական համակարգի բարեփոխումների միջոցով ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացումը:

Էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը, ներկայացնելով իր ղեկավարած նախարարության հաշվետվությունը, նշել է, որ նախարարության առաջնահերթ ծրագրերն են սոցիալ-տնտեսական երկարաժամկետ զարգացման քաղաքականության ճշգրտումը, Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավումը: Էկոնոմիկայի նախարարության այս տարվա գործունեության հիմնական ուղղություններից են նաև արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ձեռնարկումն ու դրա մեկնարկի ապահովումը, որակի ազգային ենթակառուցվածքի բարեփոխումների ծրագրերի իրականացումը:

Վարչապետը երկու նախարարությունների ղեկավարներին հանձնարարել է առկա մի քանի խնդիրների լուծումը վերցնել իրենց անմիջական հսկողության տակ և դրանք ավարտել նախանշված ժամկետներում:

08.08.2011
news.am

Սեպտեմբերին Երևանում կանցկացվի AJA ոսկերչական առաջին համաշխարհային ցուցահանդեսը

Հայ ոսկերիչների համաշխարհային միությունը (AJA) Սփյուռքի նախարարության աջակցությամբ նախատեսում է սեպտեմբերի 22-24-ին Երևանում անցկացնել AJA առաջին համաշխարհային ցուցահանդեսը, որը նվիրվում է Հայաստանի անկախության հռչակման 20-ամյա տարեդարձին:

Սփյուռքի նախարարության մամուլի ծառայությունից NEWS.am-ին հայտնում են, որ անդրանիկ ցուցահանդեսն իր տեսակի մեջ բացառիկ շքեղ, իսկ բովանդակությամբ՝ բարեգործական ուղղություն ունեցող միջոցառում է, որին մասնակցելու են հայազգի ոսկերիչներ աշխարհի տարբեր երկրներից, այդ թվում՝ Միացյալ Նահանգներից, Կանադայից, Շվեյցարիայից, Ռուսաստանից, Ֆրանսիայից, Իտալիայից, Թայլանդից, Լիբանանից: Կներկայացվեն հայ վարպետների թանկարժեք ոսկերչական աշխատանքներ, որոնք միեւնույն ժամանակ արվեստի բարձրարժեք նմուշներ են: «Yerevan Show»-ին մասնակցելու պատրաստակամություն են հայտնել հայերին պատկանող այնպիսի հեղինակավոր ընկերություններ, ինչպիսիք են Էստետը, Haytayan, Bergio, Tacori, Waskol, Yessayan Jewellery և մի շարք այլ հայտնի ընկերություններ:

Ցուցահանդեսին, ինչպես նաև ցուցահանդեսի շրջանակներում անցկացվելիք՝ «AJA-ի դերը Հայաստանի ոսկերչական արդյունաբերությունը միջազգային ոսկերչական հանրությանը ինտեգրելու գործում» խորագրով համաժողովին, ավանդույթներով հարուստ հայ ոսկերչական արվեստը պատմական հայրենիքում ներկայացվելու է իր ամբողջ բազմազանությամբ: Այս հավաքը հնարավորություն կտա ոչ միայն ճանաչել միմյանց և ամրապնդել կապերն աշխարհասփյուռ հայ ոսկերիչների միջև, այլև կցուցադրի արդի հայ ոսկերչության ձեռքբերումները և կդառնա նոր շահավետ գործարար կապերի սկիզբ: Ցուցահանդեսի շրջանակում նախատեսված է նաև բարեգործական ակցիա՝ «Նվիրիք կյանք» հիմնադրամի հետ համատեղ:

04.08.2011
news.am

Խրախուսվում է ժամանակակից սարքավորումների ներմուծումը

Այսօր տեղի է ունեցել կառավարության նիստ, որը վարել է վարչապետ Տիգրան Սարգսյանը: ՀՀ կառավարությունը հաստատել է «Ժամանակավոր ներմուծում» և «Ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմներով ներմուծված (արտահանված) ապրանքների նկատմամբ կիրառված համապատասխան մաքսային ռեժիմի ժամկետների երկարաձգման նպատակով կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության և ժամկետների երկարաձգման, 300 մլն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ գումարների վճարման ժամկետի հետաձգման նպատակով կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգերը, փոփոխել իր նախկին որոշումներից մեկը, ևս մեկն ուժը կորցրած ճանաչել:

Ըստ փաստաթղթի՝ ներմուծված կամ արտահանված ապրանքների նկատմամբ համապատասխան ռեժիմի երկարաձգման թույլտվությունը տարածվում է նաև ՀՀ կառավարության հավանության արժանացած ներդրումային ծրագրի վրա: Բացի այդ, կստեղծվեն ժամանակակից սարքավորումների ներմուծումը խրախուսելու գործունե մեխանիզմներ:

Հաջորդ որոշմամբ հաստատվել է գերփոքր ձեռնարկատիրության սուբյեկտների թողարկած ապրանքների սերտիֆիկացման

նպատակով պետության կողմից 50 տոկոս փոխհատուցման կարգը, այդ նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը ս.թ. երրորդ եռամսյակում հատկացվել 10 մլն դրամ: Այսպիսով, պետական աջակցություն է ցուցաբերվում հանրապետության գերփոքր ձեռնարկատիրության սուբյեկտներին՝ վերջիններիս արտաքին շուկաները հասանելի դարձնելու համար: Որոշման նպատակը, ըստ վարչապետ Տիգրան Սարգսյանի ձևակերպման, այն է, որ փոքր և միջին ձեռնարկությունները եվրոպական շուկաներում իրենց արտադրանքն իրացնելու խթան ստանան՝ իմանալով, որ այդ ծախսի 50 տոկոսը հատուցելու է պետությունը: «Փորձնական նախագիծ է, և հույս ունենք, որ շատերը կօգտվեն այս հնարավորությունից», - հավելել է վարչապետը:

Փոփոխություններ կատարելով իր նախկին որոշումներից մեկում, որը վերաբերում է վաճառքի համար նախատեսված կոշկեղենի բաղկացուցիչ մասերի նյութերի մակնշմանը, գործադիրն այն լիովին համապատասխանեցրել է Եվրոպական խորհրդարանի և Եվրախորհրդի դիրեկտիվին և հանձնարարականին, ինչը կնպաստի Հայաստանի տնտեսավարող սուբյեկտների արտադրած և արտահանվող կոշկեղենի հանդեպ վստահության և մրցունակության բարձրացման ապահովմանը:

ՀՀ կառավարությունն իր ընդունած երկու որոշումներից առաջինով նպատակահարմար է համարել երկրում ներդնել էներգետիկ փորձաքննության ինստիտուտ, երկրորդով ուժը կորցրած է ճանաչել փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեմային հավանություն տալու իր ավելի վաղ ընդունած որոշման հավելվածի «Սևանա լճի ավազանե բաժինը՝ դրանով իսկ բացառելով փոքր ՀԷԿ-երի կառուցումը Սևանի ավազանում, ինչի շնորհիվ կբարելավվի լիճ թափվող գետերի էկոլոգիական վիճակը և նոր խթան կստանա ձկնաշխարհի վերականգնումը:

Այս մասին տեղեկացնում են ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունից:

04.08. 2011

Aysor.am

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՅԻՆ

Սույն տեղեկագրի թողարկումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերֆարթ Ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի, և ԱՄՆ բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ: Տեղեկագրի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են Օտարերկրյա Ներդրումների և Համագործակցության Առցիցաջիային, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերֆարթ Ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ: